

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հունվարի 1-ին, չորեքշաբթի.—Կաղանդ, Տարեմուտ:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել վրդ. Աջապահյանը և պատարագի վերջում Իջման ս. սեղանից հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հավարտ պատարագի կատարվեց Հայրապետական մաղթանք:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Հունվարի 5-ին, կիրակի.—Ճրագալոյց Ծննդեան և Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, հանդիսավոր ս. պատարագ մատուցեց Ս. Հռիփսիմե վանքի վանահայր գերշ. Տ. Անանիա եպս. Արաբաջյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Հունվարի 6-ին, երկուշաբթի.—Տօն Ծննդեան և Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Հիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, հանդիսավոր ս. պատարագ մատուցեց Մայր Աթոռի դիվանապետ գերշ. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը:

* * *

Հունվարի 7-ին, երեքշաբթի.—Յիշատակ մեռելոց:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, հոգեհանգստյան ս. պատարագ մատուցեց Մայր Աթոռի մկրտարանի ծիսակատար Տ. Եղիշե ավ. քհն. Բաղրամյանը:

* * *

Հունվարի 12-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Մակար քհն. Տերտերյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը (տես էջ 6):

* * *

Հունվարի 13-ին, երկուշաբթի,— Տօն Անուանակոչութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Արտակ ավ. քհն. Սիմոնյանը:

* * *

Հունվարի 19-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Տիրայր քհն. Գըլըճյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Հունվարի 22-ին, չորեքշաբթի.— Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

* * *

Հունվարի 26-ին, կիրակի.— Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Խաչատուր ավ. քհն. Ֆրանկյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Փետրվարի 2-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Վազգեն աբղ. Միրզախանյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* * *

Փետրվարի 5-ին չորեքշաբթի.— Այսօր Վեհարանում Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

* * *

Փետրվարի 9-ին, կիրակի.— Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Նարեկ ավ. քհն. Մատարյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Փետրվարի 12-ին, չորեքշաբթի·— Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

* * *

Փետրվարի 14-ին, ուրբաթ.— Տեառնընդառաջ: Տօն քառասնօրեա գալըստեանն Քրիստոսի ի Տաճարն:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Արտակ ավ. քհն. Սիմոնյանը:

* * *

Փետրվարի 16-ին, կիրակի.— Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Հունաստանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Ոսկան եպս. Գալփաքյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Մարտի 1-ին, կիրակի.—Բուն Բարեկենդան:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Կոմիտաս քհն. Հարությունյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը:

* * *

Մարտի 4-ին, չորեքշաբթի·— Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

* * *

Մարտի 8-ին, կիրակի.— Արտաքսման կիրակի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Մակար քհն. Տերտերյանը: «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց Մայր Աթոռի դիվանապետ գերշ. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

* * *

Մարտի 15-ին, կիրակի.— Անառակի կիրակի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Տիրայր քհն. Գըլըճյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Վրաստանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Գևորգ եպս. Սերայդարյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Մարտի 22-ին, կիրակի.—Տնտեսի կիրակի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Նարեկ ավ. քհն. Մատարյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը (տես էջ 9):

* * *

Մարտի 25-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

* * *

Մարտի 29-ին, կիրակի.—Դատավորի կիրակի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Վազգեն աբղ. Միրզախանյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Միքայել վրդ. Աջապահյանը (տես էջ 75):